

րու Պարսկաստանէն արտածուած՝ ամէն կողմէ Հայոց ձեռքը կեղրոնացած էր գլխաւորաբար:

Անշուշտ պէտք է մոռնալ, որ այս վաւերաթուղթերը պատրաստուած են Խնդիր ունեցող վաճառականներու համար, մինչ անդին բազմիցս աւելի խոշոր եղած է Վենետիկի մէջ մետաքսի վաճառական Հայոց թիւը, որոնք զանգատելու կամ իրենց ղէմ զանգատ հանելու որեւէ պատճառ չունենալով՝ աննշմար մնացած են կամ յիշողութեան արժանի չեն եղած:

Հալէպ գտնուող Վենետիկցիներէն ոմանց հետ նեղութիւններ ալ ունեցած են հայ վաճառականները, մասնաւորաբար նոր եւ անիրաւ տուրքերու պատճառով: Հայ վաճառականները կազմակերպուած ըլլալու էին, որ կրցած են մինչեւ Վենետիկի պետութեան ուշադրութիւնը գրաւել ու պայքարիլ: Կրնայ ըլլալ, որ Վենետիկցի եւ Հայ վաճառականներու միջեւ մրցակցութիւն գոյութիւն ունէր, որով անոնք երբեմն, մանաւանդ Հալէպի մէջ, միջոցներու դիմած են՝ Հայոց ուղղակի Վենետիկ հում մետաքս տանելու ձեռնարկները անշահարէր ընելու համար: Բան մը, որ վտանգաւոր նըկատուած է Վենետիկի կառավարութենէն եւ վերջինս միջոցներու դիմած է որ չըլլայ թէ հայերը «թողուն զՎենետիկ եւ ուրիշ տեղ տանին վաճառքին»⁴⁾

Սակայն, Հայ վաճառականները շարունակած են իրենց առևտուրը Վենետիկի հետ գոնէ մինչեւ 1602 թուականները: Այս թուականին «Գրիգոր ո. Մարտիրոսի եւ Գէորգ ո. Անտոնի Զուղայեցիք՝ իրենց գործակալ կարգեն զՄարկոս Մուրատ սանսէր եւ անոր որդին Յակոբ որ պահանջեն Տոռակուինչի (Tor-naquinci) անուանեալ Փլորենցացիներէ՝ իրենց ծախած մետաքսի գինը»: ⁵⁾

4) Հայ-Վենետիկ, էջ՝ 464-465:

5) Անդ՝ էջ 378-379 եւ 407: Հեաղհեաէ ինկաւ Վենետիկի հրապարակը իր առաջնակարգ գիրքէն: 1675-ին Անգլիացի ազնուական մը Վենետիկի վաճառականութեան մասին կը գրէ. «Ընդհանուր կերպով առևտուրը այժմ շատ աննշան է: Երկար ժամանակ է վեր կորսուած է Հալէպի վրայով Հնդկաստանի առև-

ուրեմն, այսպէս որոշ կ'երեւայ Հայերու նախանձ շարժելու չափ ազդեցիկ գործունէութիւնը ոչ միայն ընդհանուր վաճառականութեան, այլ մասնաւորապէս հում մետաքսի վաճառականութեան մէջ:

* * *

Պարսկահայ առևտրական պատմութիւնը գլխաւոր գլուխներէն մէկն է Հայ տնտեսութեան եւ վաճառականութեան պատմութեան: Մեր մէջ ոչ միայն կը պակսին գոհացուցիչ ուսումնասիրութիւններ կամ նոյնիսկ մենագրութիւններ հայ առևտուրի, տնտեսութեան կամ արտադրութեան պատմութեան համար, այլ նոյնիսկ կը պակսի գոյութիւն ունեցող հում նիւթերու հրատարակութիւնը:

Պարսկահայ վաճառականութիւնը Սաւաֆեան փայլուն շրջանէն ալ շատ առաջ արդէն բարգաւաճ եւ զրեթէ տիրական էր Պարսկաստանի մէջ: Դժուար է նիւթ գտնել այդ մասին Իլ-Պաներու տիրակալութեան կամ Լանկթիմուրի շրջանին: Գրեթէ շատ ծանօթ է մեծանուն վաճառականապետ Թաւրիթեցի Սօջայ Միրաքի պարագան, որ սպաննուեցաւ յիմար մոլեռանդ մահմետականէ մը: Այս ըստ պատմութեան պատճառով Ուզուն Հասան, որ կը սիրէր ինքզինքը Հայոց Թապաւոր Շահ ի Արմէն կոչել երբեմն, խիստ կերպով պատժեց Թաւրթի մահմետական բնակչութիւնը:

Գուցէ այլ առթիւ կարենամ տալ Պարսկահայ առևտուրի եւ տնտեսութեան պատմութիւնը, որ պէտք է խոստովանիլ, մեծ աշ-

տուրը, Թուրքերուն առևտուրը, ձէնովացոց անոր մէջ սպրդած ըլլալուն պատճառաւ: Բացի այն առևտուրէն, զոր Անգլիացիք եւ Հոլանտացիք կ'ընէին իրենց Գանտիայի հետ ունեցած պատերազմին առեւ, որմէ առաջ անոնք Վենետիկի մէջ տարեկան 2,600 ծրար լաթ կը գործէին, այժմ ոչ իսկ 500 (ծրար) է Թուրքիա զրկածնին, բացի մետաքսէ, ոսկիէ, արծաթէ, բլբլեղապակիէ եւն., որոնցմէ ոմանք աւելի ներս Պարսկաստան, Արաբիա եւ Հայաստան կը զրկուին»: (A Collection of Voyages and Travels.— Thomas Osborne.— 1745, London, Vol. I, p. 453):